ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԿԱԶՄԵՑ՝ ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԷՊՈՍԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ	6
1.1 ԷՊՈՍԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	6
1.2 ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ	9
ԳԼՈՒԽ2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱ ԵՎ ԱԶԳԱՅԻՆԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻ	13
ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	13
««ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ»ԷՊՈՍ»ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

էպոսն ամեն ժողովրդի հոգեկերտվածքն է, նրա փառավոր անցյալի բանավոր հիշողությունը, սերունդներին կրթելու և դաստիարակելու գեղարվեստական լավագույն ստեղծագործությունը, անձի ազգային արժանապատվության վառ վկան:

Աշխարհի շատ հին ու նոր ժողովուրդներ, էթնիկ խմբեր ունեն իրենց էպոսը կամ էպոսները տարբեր թեմաներով՝ հայրենասիրություն, հավերժական կյանքի գաղտնիք, արդարության և անարդարության հակամարտություն և այլն:

Այս բազմազանության մեջ առանձնանում է հայկական էպոսը՝«Սասնա ծռերը»: Այս անվանման հետ մեկտեղ գործածվել են նաև այլ անվանումներ («Սասունցի Դավիթ», «Սասնա տուն», «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» և այլն): Այն հայրենասիրության, ազգային ինքնաճանաչողության, արժեհամակարգի ձևավորման, անհատի գործունեության և դերի կարևորության և ի վերջո արժանապատվության մի մեծ հանրագիտարան է: Ուստի պատահական չէ, որ 1964թվին աշխարհի վիպերգերի միջազգային մրցույթում ճանաչվեց լավագույնը, իսկ 2012 թվից ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական ժառանգության ցուցակում:

Հայկական էպոսը թեև թվագրվում է 8-10-րդ դարերը և թեման հայ-արաբական կռիվներն են, հայ ժողովրդի անզիջում պայքարն ու հայրենաշինությունը խալիֆայության ճնշման ներքո, բայց ավելի խոր արմատներ ունի և ձգվում է մինչև հայ ժողովրդի կազմավորումը, նախաքրիստոնեական հավատալիքները, ջրի պաշտամունքը: Դարերի խորքից եկել և ամբողջական տեսք է ստացել արդեն 10-րդ դարում: էպոսի հիմնական իրադարձությունները հյուսվում են սասունցի հերոսների շուրջ: էպոսը բաժանվում է չորս ճյուղերի՝ Սանասար և Բաղդասար եղբայրների (առաջին ճյուղ), Մեծ Միհրի (երկրորդ ճյուղ), Սասունցի Դավթի (երրորդ ճյուղ) և Փոքր Միհրի (չորրորդ ճյուղ): էպոսի առանցքային հերոսները, նրանց կանայք և որոշ մերձավորներ մարմնավորում են խիազախությունը, անկոտրումությունը, իրենց վարքով և քայլերով արտահայտում են օրինակելի հայրենասիրությունը:

Եթե դարերով բերնեբերան պատմվել, երգվել է ավանդազրույցը, ապա կարելի է ասել, որ այն մեծ այբբենարան է հայրենասիրության, քաջագործությունների, մարդկային հարաբերությունների, բնավորության կերտման, հայրենի տուն հիմնելու մի մեծ ուղեցույց:

Յուրաքանչյուր սովորող պետք է իմանա, թե ինքն ով է, որտեղից է սերվում, իր նախնիների հոգեկերտվածքն ու բնավորությունը ինչպիսին են եղել, օտարների և անգամ թշնամիների հետ հարաբերվելու ձևերը որոնք են: Այս ամենը կդառնան մի մեծ դպրոց, ուղենիշ իր ու իր ազգի ապագան կերտելու գործում: Այս հարցերի

պատասխանները լիովին ընդգրկված են «Սասնա ծռեր» էպոսի 4 ճյուղերի դիպաշարում, հերոսների կյանքում, գործողություններում:

Թեմայի արդիականություն: «Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում» թեմայի արդիականությունը պայմանավորված է մեր օրերում հայրենասիրության և ազգային արժեհամակարգի վրա էպոսի ունեցած բովանդակային և գաղափարական ազդեցության ուսումնասիրման անհրաժեշտության հետ: Էպոսներ, առասպելներ, ժողովրդական բանահյուսություններ, ավանդազրույցներ և հերոսապատումներ ունեն աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդներն ու ցեղերը: Ոմանց մոտ էպոսն ու մյուս առասպելապատումները սերտորեն կապված են ազգային արմատների և սովորույթների հետ, ոմանց մոտ դրանք փոխկապակցված են կրոնի և մշակույթի հետ, որոշ ազգեր էլ նման ստեղծագործություններով փորձում են որոշակի պատմագեղարվեստական բնույթ հաղորդել իրենց ազգի ծագումնաբանությանը: Մեր օրերում աշխարհի գլոբալիզացիայի դրական ու բացասական ազդեցության ներքո հայկական դպրոցներում էպոսի կերպարների ու գործողությունների միջոցով ազգային արժեհամակարգի պահպանման և աշխարհի ժողովուրդների հետ հաղորդակցման ճիշտ մոտեցումը թաքնված է հենց «Սասնա ծռերում»;

Բոլոր դեպքերում էլ էպոսի և մյուս ստեղծագործությունների հիմնական գործառույթն ու առաքելությունը տվյալ ազգի, ժողովրդի կամ ցեղի ներկայացուցիչների մոտ հայրենասիրության դաստիարակումն ու ազգային արժեհամակարգի ձևավորումն է: «Սասնա ծռեր» էպոսն այսօր պարբերաբար դասավանդվում է հանրակրթական դպրոցի տարբեր դասարաններում: Աշակերտների յուրաքանչյուր տարիքային խումբ էպոսի գաղափարը և ուղերձը յուրովի է ընկալում: Այն առավել արդյունավետ է յուրացվում հատկապես հիմնական դպրոցի բարձր դասարանների և ավագ դպրոցի աշակերտների մոտ, որոնք ամբողջությամբ ընկալում են էպոսի բովանդակությունն ու գաղափարախոսությունը, դրա արժեհամակարգային նշանակությունը:

Հետազոտության նպատակ և խնդիրներ: Սույն թեմայի հետազոտության նպատակն է առանձնացնել էպոսի կարևորությունը հայրենաճանաչության, ազգային դաստիարակության և արժեհամակարգի ձևավորման գործում, բացահայտել ըստ տարիքի էպոսում քննարկվող արժեքներն ու ուսուցման ձևերը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել «էպոս» հասկացությունը և էպոսի առաջացման պատմությունը,
- ներկայացնել ազգային արժեհամակարգի բաղադրիչներն ու հայրենասիրության դերը դրանցում,
- ուսումնասիրել «Սասնա ծռեր» էպոսում քարոզվող ազգային արժեքները,

- արժեհամակարգերն ու դրանց առանձնահատկությունը,
- վերլուծել և ամփոփել ««Սասնա ծռեր» էպոս» թեմայով անցկացված դասընթացի արդյունքները:

Հետազոտության օբյեկտ և առարկա: Հետազոտության օբյեկտ է էպոսը («Սասնա ծռեր» էպոսը), իսկ ուսումնասիրության առարկա՝ էպոսի հայրենասիրական տարրերն ու ազգային արժեհամակարգի ձևավորմանը նպաստող բաղադրիչները:

Հետազոտության մեթոդաբանությունը: Թեմայի հետազոտության ընթացքում կիրառվել են փաստաթղթերի վերլուծության և էմպիրիկ (դիտարկման, համեմատման, փորձի) մեթոդները:

Հետազոտության կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական մասից (տեսական և գործնական գլուխներից), եզրակացություններից և առաջարկություններից, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը՝18 էջ :

Առաջին գլխում («Էպոսը՝ որպես հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման միջոց») ներկայացվել է «էպոս» հասկացության մեկնաբանությունը, էպոսի առաջացման պատմությունը, ազգային արժեհամակարգի բաղադրիչներն ու դրանց քարոզումն էպոսի միջոցով:

Երկրորդ գլխում («Հիմնական դպրոցի դպրոցականների շրջանում հայրենասիրության և ազգային արժեհամակարգի դաստիարակման մեր փորձից») ներկայացվել է 9-րդ դասարանիդպրոցականների հետ ««Սասնա ծռեր» էպոս» թեմայով իմ անցկացրած դասընթացի ընթացքն ու արդյունքները:

Գրականության տեսություն: Աշխատանքի հետազոտման համար կարևոր տեղեկությունների աղբյուր են հանդիսացել բանասեր-բանագետ Սարգիս Հարությունյանի «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական հերոսավեպը [1] և «Հայ հին վիպաշխարհը» [2] , ինչպես նաև Մանուկ Աբեղյանի «Երկեր» [3] աշխատությունը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև այլ աշխատություններ, որոնք ամբողջությամբ ներկայացված են օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում:

---

[1]Տե՛ս Հարությունյան Ս., «Սասունցի Դավիթ: Հայ ժողովրդական հերոսավեպ», Երևան, «Լույս», 1981, 367 էջ:

[2] Տե՛ս Հարությունյան Ս., «Հայ հին վիպաշխարհ», Երևան, «Արևիկ», 1987, 180 էջ:

[3] Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հատոր Ա, Երևան, Հայկական ՍՍՀ հրատ., 1966, 571 էջ:

ԳԼՈՒԽ 1
ԷՊՈՍԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

1.1 Էպոսի առաջացման պատմությունը

Էպոսների առաջացման և ծագումնաբանության պատմությունը բավականին բարդ է նկարագրել և մեկնաբանել: Պատճառն այն է, որ դրանք առաջացել են ժողովրդական զրույցների, սերնդեսերունդ միմյանց փոխանցված պատմվածքների բանահավաքման միջոցով: Եվ դրանց առաջացումը որևէ հստակ հեղինակի չի վերագրվում: Նախևառաջ, սկսենք նրանից, թե ինչ է իրենից ներկայացնում էպոս բառը, որը երբեմն շփոթում կամ որպես հոմանիշ կիրառում են առասպելների, վեպերի, ավանդազրույցների հետ: Խորհրդային և հայ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Աղայանն (1913 – 1991թթ.) իր «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում էպոս բառը բացատրում է որպես ժողովրդական խոշոր դյուզացներգական՝ վիպերգական ստեղծագործություն[4]: Բանասեր և բառարանագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Ստեփան Մալխասյանցն (1857 – 1947թթ.) իր «Հայերէն բացատրական բառարան»-ում տալիս էր նույն բառի ավելի հակիրճ բացատրությունը՝ վեպ[5]:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Զրբաշյանն (1923 – 1999թթ.) իր «Գրականագիտական բառարան»-ում էպոս բառին տալիս էր հակիրճ բացատրություն՝ վիպերգություն[6]: Մինչդեռ առասպել բառին նա տվել էր բավականին ծավալուն բացատրություն. խոսք, ասք, ավանդություն, ժողովրդական բանահյուսության վիպերգական ժանրերից մեկը, որում գերբնական ու չափազանցված ձևով արտացոլվել են հնագույն ժողովուրդների կյանքի կարևորագույն դեպքերը, աշխարհի վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու ըմբռնումները[7]: Հայագետ, բառարանագիր և բանահավաք, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանուկ Աբեղյանն (1865 – 1944թթ.) իր «Երկեր» գրքի 1-ին հատորում անդրադառնում է էպոսների,

---

[4] Տե՛ս Աղայան Էդ., «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, «Հայաստան», 1976, էջ 395:

[5] Տե՛ս Մալխասեանց Ստ., «Հայերէն բացատրական բառարան», Երեւան, Հայկական ՍՍՌ պետհրատ., 1944, էջ 49:

[6] Տե՛ս Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ., «Գրականագիտական բառարան», Երևան, «Լույս», 1980, էջ 122:

[7] Նույն տեղում, էջ 26 – 27:

առասպելների, բանահյուսությունների և ավանդազրույցների թեմային: Աբեղյանը նշում է, որ առասպելից տարբերվող ծագում ունի վիպական տեսակը՝ ավանդական վեպը (էպոս): Եթե առասպելներն ունեն ավելի դիցաբանական բնույթ, շատ քիչ պատմական ազդեցություն, էպոսն իր ծագումով, ընդհանուր առմամբ, բնիկ, ինքնուրույն ստեղծագործություն է:

Միաժամանակ Աբեղյանը հավելում է, որ իսկական պատմական իրադարձությունները մասամբ ստացել են առասպելական երանգավորում, որի արդյունքում առաջ է եկել առասպելական էպոսը[8]:

Այսօր աշխարհի շատ ժողովուրդներ ունեն ազգային էպոսներ, նրանցից ոմանք ունեն նաև մի քանիսը: Հին էպոսների շարքին են դասվում շումերական «Գիլգամեշ»[9] և աքքադական «Ատրահասիս» էպոսները, որոնցում ներկայացվում էին համաշխարհային ջրհեղեղի և նոր ցամաքի հայտնաբերման իրադարձությունները: Այս էպոսներն ավելի հին են իրենց ծագմամբ, քան բիբլիական Նոյի պատմությունը: Թե՛ շումերական «Գիլգամեշի» և թե՛ աքքադական «Ատրահասիս» պատմվածքների գլխավոր հերոսներն ավելի շատ կարելի է նույնականացնել աստվածաշնչյան հերոս Նոյի հետ, ում Աստված կարգադրեց կառուցել տապան և իր ընտանիքի, մերձավորների, աշխատողների ու բազմաթիվ կենդանատեսակների հետ դրանում պատսպարվելով փրկվել համաշխարհային ջրհեղեղից: «Գիլգամեշի» և «Ատրահասիսի» պատվածքները մեզ հնարավորություն են տալիս բացահայտել

աշխարհի արարման, մարդկության, բուսական ու կենդանական աշխարհի ծագման, ինչպես նաև համաշխարհային ջրհեղեղ առաջացման և հետևանքների մասին: Հին աշխարհի հայտնի էպոսների շարքին են դասվում Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» էպոսները: Շատ ժողովուրդների առասպելներ հիմնականում աստվածների մասին են: Սակայն Հին Հունաստանի առասպելներում կային բացառություններ: Նրանց առասպելներում մեծամասամբ մեծ կարևորություն է տրվել հասարակ մահկանացուներին, որոնք իրենց արարքով, քայլերով ու սխրագործությամբ հերոսացել ու աստվածացել են: Իսկ հին հունական դիցաբանության հերոսները հիմնականում մահկանացու կանանցից և աստվածներից ծնված որդիներն ու թոռներն էին: Նրանք սխրագործություններ ու հերոսություններ էին կատարում, մաքրում էին աշխարհը չարիքից ու հրեշներից, պատժում էին չարագործներին ու հանցագործներին: Իսկ երբ նրանք աշխարհում շատացան, աստվածներն այնպես արեցին, որ այդ հերոսները սկսեն կռվել միմյանց հետ: Տրոյական պատերազմը Հոմերոսի աշխատության մեջ ամփոփվել

---

[8] Տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 94 – 95:

[9] Տե՛ս Մարտիրոսյան Ն., «Գիլգամեշ» (Հին Արևելքի դյուցազնավեպ), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, 122 էջ:

է «Իլիական» անվամբ: Տրոյական պատերազմի մասին տեղեկությունները, մինչ անվանի հույն բանաստեղծ և առասպելագիր Հոմերոսի (Ք.ա. IX – VIII դդ.) կողմից «Իլիականում» գրի առնելը, շրջանառվում էին բալլադների և ժողովրդական ասույթներում:

Շատ գիտնականների, պատմաբանների և մշակութաբանների համար «Իլիական» [10] և «Ոդիսական»[11] առասպելները պարզապես գրական ստեղծագործություն էին, որոնց սյուժեն հորինված էր սկզբից մինչև վերջ: Սակայն այս կարծիքն ամբողջությամբ կարողացավ շրջել գերմանացի հնէաբան Հենրիխ Շլիմանը (1822 – 1890 թթ.), ով այն համոզման էր, որ Հոմերոսի հերոսներն իրական պատմական կերպարներ էին, այլ ոչ թե հորինվածք[12]:

Հոմերոսի մարգարիտներից մյուսը՝ «Ոդիսական» պոեմը հանդիսանում է «Իլիական» պոեմի տրամաբանական շարունակությունը, որտեղ, սակայն, գլխավոր հերոս է հանդիսանում Տրոյական պատերազմի մասնակից և «Իլիական» պոեմի առանձգական կերպարներից մեկը՝ Ոդիսևսը, ով պատերազմից հետո փորձում էր վերադառնալ հայրենիք, սակայն ճանապարհին հանդիպում էր իր կողմից մերժված աստվածների կողմից հարուցած բազմաթիվ դժվարությունների, որոնց հետ կենաց- մահու կռիվ էր տալիս: Այս էպոսում ընթանում էր սովորական մահկանացուի համառ պայքարն իրեն փորձությունների տանող աստվածների դեմ, որում իր անկոտրուն ոգով ու համբերատարությամբ հաղթում է Ոդիսևսը: Էպոսներ և առասպելներ դարերի ընթացքում տարբեր ժողովրդական զրույցների, ասույթների և բանահյուսությունների հիման վրա ձևավորվել են նաև աշխարհի մյուս ժողովուրդների մոտ: Մեզ մոտ լայն ճանաչում է ստացել «Սասնա ծռեր» էպոսը, մեր հարևան վրացիների մոտ՝ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը», արաբական «Հազար ու մի գիշեր»-ը, հնդկական «Մահաբհարտա»-ն և «Ռամայանա»- ն, պարսկական «Շահնամե»-ն, իտալական «Աստվածային կատակերգությունը» (Դանթե Ալիգիերի), ֆրանսիական «Երգ Ռոլանդի մասին»-ը, անգլոսաքսոնական

«Բեովուլֆը», իսպանական «Դոն Կիխոտ»-ը, գերմանական «Նիբելունգների երգը», շվեյցարական «Վիլհելմ Թել»-ը և այլն:

---

[10] 10 Տե՛ս Հոմերոս, «Իլիական» (վիպերգ); Գրաբարից թարգմ. Մ. Խերանյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 500 էջ:

[11] 11 Տե՛ս Հոմերոս, «Ոդիսական»; Հին հունարենից թարգմ. Հ. Համբարձումյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1958, 364 էջ:

[12] 12 Տե՛ս Троянская война: Миф и реальность − http://www.historie.ru/civilizacii/krito-mikenskaya-civilizaciya/62-troyanskaya-voyna-mif-i-realnost.htmlHYPERLINK "http://www.historie.ru/civilizacii/krito-mikenskaya-civilizaciya/62-troyanskaya-voyna-mif-i-realnost.html" (բացված՝ 13. 07. 2022)

Վերոնշյալ էպոսներից և առասպելներից յուրաքանչյուրում հերոսությունն ու սխրագործություններն իրականացնողները տարբեր կերպարներ են՝ աստվածներ, կիսաստվածներ, հասարակ մահկանացու հերոսներ, կրոնավորներ, ասպետներ, կանայք և այլոք: Յուրաքանչյուր ազգի էպոս իր ազգային արժեհամակարգի արտացոլանքն է: Նշված էպոսներից յուրաքանչյուրից կարելի է պատկերացում կազմել, թե ինչպիսի արժեքներ են դավանում և քարոզում դրանց միջոցով:

Ինչ վերաբերում է «Սասնա ծռեր» հայ ազգային էպոսին, ապա դրանում առկա է բարոյախրատական, հերոսական և հայրենասիրական բովանդակություն: Սակայն հայրենասիրությունն էպոսում ոչ է կրում է ընդհանրական, այլ տեղական (Սասուն) բնույթ: Ինչպես արդարացիորեն իր առանցքային աշխատության մեջ նշել է Մանուկ Աբեղյանը. էպոսի հերոսները հոգ են տանում, որպեսզի «Սասման տան անունը չկորչի»: Մինչդեռ նրանք գրեթե ոչ մի անգամ չեն անդրադառնում ամբողջական հայրենիքին կամ հայկական մյուս հողերի հայությանը[13]: Ցավոք սրտի, պետք է արձանագրենք, որ «Սասնա ծռեր» էպոսում առկա տեղական հայրենասիրությունն այսօր արմատացած է ինչպես Հայաստանի, այնպես էլ դրա սահմաններից դուրս ապրող հայության շրջանում: Գյումրեցիները մենաշնորհել են պատվախնդրությունը, լոռեցիները՝ պարզությունն ու միամտությունը, արցախցիներն ու սյունեցիները՝ քաջությունն ու հայրենասիրությունը, սասունցիների ու զեյթունցիների ժառանգները՝ ռազմիկությունը: Ազգային էպոսը պետք է կրի ընդհանրական, այլ ոչ թե տեղական բնույթ՝ տարանջատելով և գերագնահատելով մի հատվածի ժողովրդին:

- ***Ազգային արժեհամակարգի բաղադրիչները***

Ազգ» կամ «natio» բառը ի սկզբանե ծագել է լատիներեն «nascor» - ծնվել բառից: Այն սկզբնական շրջանում լայն շրջանառության մեջ էր անտիկի աշխարհում, հատկապես՝ Հին Հռոմում: Միևնույն ժամանակ այն լայն կիրառվում էր նաև հունական

«էթնոս» բառի հետ միասին, որը նշանակում էր մարդկանց ցեղ կամ հասարակություն, որոնք սերտորեն կապված էին արյունակցական կապերով, արտաքին նմանությամբ, լեզվով և տարածքով: Արդյունքում «ազգ» հասկացությունը սկսեց գործածվել մի շարք էթնիկական խմբերի միաձուլումը բնորոշելու համար, որը տեղի է ունեցել միգրացիայի, տարածքների զավթման կամ հողերի միավորման արդյունքում: Տարբեր իրավիճակներում «ազգ» հասկացությունը կարող է նշանակել թե՛ էթնիկական հասարակություն, թե՛ մի ամբողջ պետության բնակչություն, իսկ անգլերեն լեզվում այն կարող է բնորոշել նաև պետություն: Նման դրությունը հանգեցրել է նրան, որ մի շարք

[13] 13 Տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 445:

ժամանակակից գիտական դպրոցների աշխատանքներում և նույնիսկ միջազգային փաստաթղթերում «ազգ» և «էթնոս» հասկացությունները օգտագործվում են որպես հոմանիշներ[14]:

Ազգը ի սկզբանե բնական ծագում ունի, այն արյունակցական, ցեղատոհմային հասարակարգի էվոլյուցիայի հետևանք է, պետությունը նույնպես էվոլյուցիոն ծագում ունի, բայց ստեղծվել է «բնական» ազգի ներսում՝ հանրային կյանքի բարդացման, և արդիականացման հետևանքով, հայրիշխանության կարգի հիման վրա: Ինչպես նշում էր ժամանակի ականավոր գերմանացի սոցիոլոգ, պատմագետ և քաղաքական տնտեսագետ Մաքսիմիլիան Կարլ Էմիլ Վեբերը, նույն ինքը՝ Մաքս Վեբերը (1864 – 1920թթ.). «ազգը համապատասխանաբար ինքնարտահայտվում է սեփական ազգային պետությունում, որը, որպես կանոն, ծառայում է որպես արժեքավոր գաղափարների ավելի բարդ միահյուսման քողարկման համար»[15]:

Հաճախ լինում է նաև այնպես, որ դիցաբանությունը, առասպելը, խորհրդանիշը, հուղարկավորությունը և շատ ու շատ այլ բաներ առավել հզոր ուժ գտնվեցին: Ազգ գոյություն ունի այնտեղ, որտեղ մարդիկ իրենք են հավատում նրան, որ իրենք կազմում են հենց ազգ: Իրականությունը կայանում է նրանում, որ մարդկանց մեծամասնությունը ժամանակակից աշխարհում իրենց համարում են որպես որոշ համայնքի կամ հասարակության անդամ, որն անվանում են ազգ: Ազգ-պետության և նրա ֆիզիկական ու հոգևոր տիրույթում ձևավորված քաղաքական ազգի գործառական առանձնահատկությունները պայմանավորված են ժողովրդավարության, ազատականության և ազգայնականության փոխազդեցությունների բնույթով, իսկ դրանք, իրենց հերթին, որպես գաղափարախոսություններ և կառավարման համակարգի բաղադրիչներ, բխում են ազգ-պետության նպատակներից և բարձրագույն արժեքներից (հավասարություն, ազատություն, ազգային ինքնավարություն և ինքնության պահպանում):

Այս համատեքստում ազգը հասկացվում է «իբրև մի հասարակություն, որը զբաղեցնում է որոշակի տարածք և ունի ընդհանուր ինքնության, պատմության ու ճակատագրի զգացում-ըմբռնում» [16]:

---

[14] 14 Տե՛ս Соловьев А., «Политология: политическая теория, политические технологии», Москва, 2008, с. 153.

[15] 15 Տե՛ս Вебер М., «Объективность» познания в области социальных наук и социальной политики // Левит С. Я. Культурология. XX век. Антология. Москва, 1995, с. 600.

[16] Տե՛ս Այվազյան Ա., «Հին Հայաստանը որպես «ազգային պետություն»», Երևան, 2005, № 5, էջ

Շատ կարևոր է հաշվի առնել նաև այն փաստը, որ հստակ ազգության ներկայացուցիչները լավ գիտակցում են նաև որպես հստակ հասարակության ներկայացուցիչներ, որը իրենց տարբերում է մյուս հասարակություններից ոչ միայն որևէ տարածքի պատկանելությամբ, որը հստակ սահմանված է պետական սահմաններով, այլև մի շարք այլև ոչ պակաս կարևոր գործոններից: Քաղաքակրթության փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դարաշրջան, իր ընդհանրացնող արժեքաբանությամբ հանդերձ, ներառում է մարդաբանական և սոցիոէթնոմշակութային առանձնահատկություններ՝ պայմանավորված շահերի մեկնությամբ:

Հայ ազգային ինքնությունը ևս ձևավորվել է ազգային ավանդույթների, սովորույթների, մշակույթի և պատմության վրա: Եվ այս առումով ազգային արժեհամակարգի բարձրագույն բաղադրիչների մեկը հայրենասիրությունն է, որի մասին հայ պետական, հասարակական և մշակութային գործիչները բազմիցս խոսել և անդրադարձել են իրենց աշխատություններում՝ սկսած հին ժամանակներից մինչև մեր օրեր: Ազգային արժեհամակարգի խնդրին իրենց աշխատություններում անդրադարձել են Մովսես Խորենացին և նրա ժամանակակից պատմիչները, հայ ազգային-ազատագրական պայքարի գործիչներ Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Խրիմյան Հայրիկը, մտավորականներ Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Սողոմոն Սողոմոնյանը (Կոմիտաս), հայրենիքի նվիրյալ ռազմական գործիչներ Անդրանիկ Օզանյանը, Գարեգին Նժդեհը և ուրիշները: Վերը թվարկվածանձանցից յուրաքանչյուրը, ստեղծագործելով և գործունեություն ծավալելով միմյանցից տարբերվող

ոլորտներում և բնագավառներում,իր անգնահատելի ներդրումն ունեցել հայ ազգային արժեհամակարգի ձևավորման գործում: Նրանց միջից հատկապես առանձնանում է Գարեգին Նժդեհն, իր ցեղակրոն ուսմունքում անդրադառնում էր բազմաթիվ խնդիրների՝ հայրենասիրությանը, ազգային արժեհամակարգին և այլն: Գարեգին Նժդեհն այն համոզման էր, որ հայ ժողովրդի ներկայիս կացության, անդադար շարունակվող պարտությունների ու պետականության մսխման հիմնական պատճառն անմիաբանությունն ու օտար հովանավորների, դաշնակիցների անդադար որոնումներն էին. «Պարտուեցինք, որովհետև մեր ցեղի ոգու բովանդակ ոյժերն օգտագործելու փոխարէն հովանաւորներ փնտռեցինք»[17]:

Ըստ Նժդեհի՝ հայրենիքը դա ո՛չ հայրենական կալվածք է և ո՛չ էլ հայրենական ժառանգություն: Յուրաքանչյուր սերունդ ինքն է ստեղծում իր հայրենիքը՝ նրան արժանի

[17] Տե՛ս Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երևան, 2006, էջ 62:

դառնալու ձգտումով: Գ.Նժդեհը ասել է. «Հայրենիք ստեղծել՝ նշանակում է բեկոր առ բեկոր հայտնաբերել, իմաստավորել, պատմականացնել և իմաստավորել երկիրը»[18]: Հայրենասիրությունն արտահայտված էր Գարեգին Նժդեհի յուրաքանչյուր արտահայտած մտքում. «Ապրել, պայքարել, հարկ եղած դեպքում՝ զոհվել հանուն ազգի ու հայրենիքի. ահա բարձրագույն երջանկությունն ու կյանքի իմաստը»[19]:

[18] Տե՛ս Սարգսյան Ա., «Փիլիսոփայության դասընթաց», Երևան, 2008, էջ 311:

[19] 19 Նույն տեղում, էջ 315:

ԳԼՈՒԽ 2

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

- *Ծրագրի նկարագրություն*

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԷՋ	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄ
Առարկա	Գրականություն	45ր
Դասարան	9-րդ դասարան	
Դասի թեման	«Սասնա ծռեր» էպոսը	
Դասի նպատակը	Նպաստել 9-րդ դասարանի դպրոցականների շրջանում հայրենասիրության դաստիարակմանն ու ազգային արժեհամակարգի ձևավորմանը:	
Դասի խնդիրները	• աշակերտներին ծանոթացնել «էպոս», «առասպել» հասկացություններին, դրանց տարբերությանը; • աշակերտներին ներկայացնել ազգային արժեհամակարգի կարևորագույն բաղադրիչները (հայրենասիրություն, ազգային արժանապատ- վություն, ազգային ինքնություն, պատիվ և այլն); • աշակերտներին ներկայացնել «Սասնա ծռեր» էպոսի բովանդակությունը, դրանում առկա հայրենասիրական և արժեհամակարգային տարրերն ու դրսևորումները:	
Անհրաժեշտ պարագաներ	9-րդ դասարանի գրականության դասագիրք	
Հիմնական հասկացություններ	• էպոս • առասպել • հայրենիք • հայրենասիրություն • ազգային ինքնություն • ազգային արժեք • արժեհամակարգ	
Վերջնարդյունք	• դասի ընթացքում աշակերտները տեսական գիտելիքներ ձեռք կբերեն էպոսների և առասպելների վերաբերյալ: • աշակերտները կբացահայտեն հայրենասիրության իրական զգացողությունը; • աշակերտների մոտ կձևավորվեն ազգային արժեհամակարգի կարևորագույն տարրերը:	

- *«Սասնա ծռեր» էպոս» թեմայով դասընթացի անցկացում*

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կազմակերպչական մաս

Դասընթացի այս փուլում ավա դպրոցականներին առաջին հերթին ներկայացվելու են հիմնական հասկացությունները, դրանց բացատրությունները: Կարճ պատմական ակնարկի միջոցով աշակերտներին ներկայացվելու են նաև տարբեր ազգերի հին և միջնադարյան շրջանին վերագրվող էպոսներն ու առասպելները: Դասը սկսելու է «էպոսների և առասպելների հիմքում ընկած են հայրենասիրությունը, ազգային ինքնության և արժեքների պահպանումը» մտքով:

Գիտելիքների, կարողությունների և ունակությունների ստուգման փուլ

Այս փուլի ընթացքում 9-րդ դասարանի աշակերտների հետ կատարում ենք նախորդ տարիների «Սասնա ծռեր» էպոսի կրկնությունն ու վերընթերցումը՝ փորձելով վերհիշել, վերականգնել էպոսի առանցքային սյուժեն: Այս փուլը հնարավորություն է տալիս բացահայտել, թե որքանով են աշակերտները յուրացրել նախորդ ուսումնական շրջանում անցած նյութը, որքանով են նրանք ընկալել դրանցում հայրենիքի արժեքը, հայրենասիրությունը, անձնազոհությունը, հերոսական սխրագործությունները: Վերհիշելով էպոսի սյուժեն, աշակերտների հետ փորձում ենք բացահայտել և վերլուծել յուրաքանչյուր հերոսի բնավորությունում առկա հայրենասիրական և ազգային արժեհամակարգին բնորոշ գծերն ու հատկանիշները:

Նոր նյութի յուրացման փուլ

Այս փուլի ընթացքում առանձնացնում ենք տղամարդ և կին հերոսներին, վերլուծում նրանց վարքում առկա հայրենասիրական դրսևորումները, փորձում աշակերտների հետ միասին մեկնաբանել դրանց դրսևորման առանձնահատկությունները: «Սասնա ծռեր» էպոսի միջոցով աշակերտներին հանգամանորեն բացատրվում է, թե որոնք են համարվում հայրենասիրության ցուցիչները, ինչպիսի ազգային արժեհամակարգի կրող պետք է լինեն ժամանակակից հայ սերնդի ներկայացուցիչները, ինչ արժեքներ պետք է դավանեն և որոնք պետք է առաջնային կարևորություն ունենան:

Ուշադիր ունկնդրելով դասընթացին, երեխաները տալիս են հարցեր «Սասնա ծռերի» չորս ճյուղերի հերոսների գործունեության վերաբերյալ, որոնց տրվում են մանրակրկիտ և սպառիչ պատասխաններ:

Նոր նյութի ամրապնդման փուլ

Դասի ամրապնդումը տեղի է ունենում հարց ու պատասխանի միջոցով, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին ամբողջությամբ յուրացնել մատուցվող նյութը: «Սասնա ծռերի» էպոսի միջոցով հայրենասիրության և ազգային արժեհամակարգի կարևոր բաղադրիչների յուրացումը չի կարող կատարվել միանգամից: Այդ ամենի համար հարկավոր է ժամանակ: էպոսի վերընթերցումը միայն կարող է որոշակի նստվածք տալ երեխաների մոտ և ձևավորել ազգային հերոսի, հայրենասերի այնպիսի կերպար, որն իր բնույթով պետք է լինի անձնազոհ, հայրենիքի համար ամեն ինչի և ամենադժվար առաջադրանքների պատրաստ անձնավորություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովուրդը պայքարող տեսակ է, նրա մարտական ոգին երբեք անտարբեր չի եղել ցավի, կորստի, անարդարության, ազգերի համակեցության նկատմամբ: «Սասնա ծռերի» էպոսը կրթեց ու դաստիարակեց հազարամյակների՝ իրար հաջորդող սերունդներին:Բավական է ասել, որ այն գրի առնելուց հետո մի այլ մակարդակ բարձրացավ ազգային- ազատագրական ոգին, արժևորվեց ազգային պատկանելությունը, խեղճության, անկարողության, ուժեղի լծի տակ կքելուզգացումը վերնականապես կոտրվեց, բարձրացավ աղգային ինքնագնահատականը և որ ամենակարևորն է՝ հավատ ներշնչեց, որ միասնական ուժը, նվիրված ու խիզախ առաջնորդը կարող են կրկին ետ բերել երբեմնի շեն ու ինքնիշխան, ազատ ու անլուծ հայ օջախը, հայ գյուղն ու շենը, հայրենի բնօրրանը: Դարեր շարունակ հայ սերունդներն ընդօրինակեցին և սեփականացրին Սասնա ծռերի դրական հատկանիշները: Պակաս կարևոր չէ հումանիստական ձգտումներն անգամ պատերազմող թշնամու՝ խաղաղ ժողովրդի նկատմամբ, սրանով սերնդեսերունդ դաստիարակվել է խեղճին, անօգնականին, ծերին, կնոջն ու երեխային, անպաշտպանին ու թույլին չհալածելու, չսպանելու սկզբունքը, դեմ առ դեմ կռվելու ու հաղթելու առնական հատկանիշները:

44-օրյա պատերազմից ու Արցախ աշխարհի անկումից հետո այսօր առավել քան երբևէ պետք են դավիթներ, Սանասար շինարարներ, առյուծաձև մհերներ:

«էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում» անցկացված դասընթացի արդյունքում հաջողվեց բացահայտել էպոս և առասպել հասկացությունների նմանություններն ու տարբերությունները, ներկայացնել էպոսի դերն ու նշանակությունը տարբեր ազգերի կյանքում, ներկայացնել տարբեր ազգերի և ժողովուրդների հայտնի էպոսները:

Աշխատանքի գործնական հատվածում հիմանակն դպրոցի դպրոցականների (9-րդ դասարանի աշակերտների հետ) «Գրականություն» առարկայի շրջանակներում.

- ««Սասնա ծռեր» էպոս» թեմայով նկատել է Մանուկ Աբեղյանը, էպոսում իրականում առկա է տեղական (Սասունի) հայրենասիրություն ընդհանրականի փոխարեն;
- 9-րդ դասրանի դպրոցականների մոտ առավել տպավորվել է Սասունցի Դավթի կերպարն ու սխրագործությունները, մինչդեռ Փոքր Մհերի՝ ժայռում փակվելու կերպարը ոմանց մոտ ընկալվել է որպես թուլություն, խռովություն, առկա խնդիրների և դժվարությունների հետ առերեսումից խուսափում;
- «Սասնա ծռեր» էպոսը նպաստեց դպրոցականների մոտ այնպիսի ազգային արժեքների ձևավորմանը, ինչպիսիք են հայրենասիրությունը, ազգային

արժանապատվությունը, պատվախնդրությունը, հայրենիքի համար անձնազոհության պատրաստակամությունը:

Ստացված եզրակացությունների հիման վրա ձևավորված մեր առաջարկությունները հետևյալն են՝

- «Սասնա ծռեր» էպոսը հանրակրթական դպրոցի տարբեր դասարաններում դասավանդելիս շեշտադրում չկատարել սասունցիների վրա, այլ սասունցիներին ասոցացնել հայի կերպարի հետ՝ նվազագույնի հասցնելով այս կամ այն տարածաշրջանում բնակվող հայերի ֆետիշացումն ու մյուսների նկատմամբ գերակայության ընդգծումը,
- «Սասնա ծռեր» էպոսի թեմայով դպրոցներում դաս անցկացնելիս չբավարարվել միայն դասագրքով: Դասընթացն առավել պատկերավոր և հետաքրքիր դարձնելու, ինչպես նաև աշակերտների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար դասընթացի ժամանակ կիրառել նաև հերոսների պատկերները, մակետները և տեսաձայնային սարքավորումները, որոնք թույլ կտան անիմացիոն տարբերակով հետևել էպոսի սյուժեին,
- «Սասնա ծռեր» էպոսի միջոցով դասընթացներ իրականացնելիս առանձնացնել չորս ճյուղերի տղամարդ և կին հերոսներին՝ առանձին- առանձին ներկայացնելով նրանցից յուրաքանչյուրին բնորոշ վարքն ու հատկանիշները, ինչպես նաև դրանցում հայրենասիրության և ազգային արժեքների արտահայտման դրսևորումները:
- Կորսված հայրենիքի վերագտնումը, անկումային տրամադրությունների փարատումը թաքնված է էպոսի էջերում, ուստի անգիր ասվող հատվածները ռազմերգի, աղոթքի ու պատգամի պես կընկալվեն գալիք սերունդների հոգեկերտվածքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբեղյան Մ., Երկեր, հատոր Ա, Երևան, Հայկական ՍՍՀ հրատ., 1966:
- Աղայան էդ., «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, «Հայաստան», 1976:
- Այվազյան Ա., «Հին Հայաստանը որպես «ազգային պետություն»», Երևան, 2005, №5:
- Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երևան, 2006:
- Հարությունյան Ս., «Հայ հին վիպաշխարհ», Երևան, «Արևիկ», 1987:
- Հարությունյան Ս., «Սասունցի Դավիթ: Հայ ժողովրդական հերոսավեպ», Երևան, «Լույս», 1981:
- Հոմերոս, «Իլիական» (վիպերգ); Գրաբարից թարգմ. Մ. Խերանյանը, Երևան, ԵՊՀ հրատ., 1987:
- Հոմերոս, «Ոդիսական»; Հին հունարենից թարգմ. Հ. Համբարձումյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1958:
- Մալխասեանց Ստ., «Հայերէն բացատրական բառարան», Երեւան, Հայկական ՍՍՌ պետհրատ., 1944:
- Մարտիրոսյան Ն., «Գիլգամեշ» (Հին Արևելքի դյուցազնավեպ), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963:
- Զրբաշյան էդ., Մախչանյան Հ., «Գրականագիտական բառարան», Երևան, «Լույս», 1980:
- Սարգսյան Ա., «Փիլիսոփայության դասընթաց», Երևան, 2008:
- Вебер М., «Объективность» познания в области социальных наук и социальной политики // Левит С. Я. Культурология. XX век. Антология. Москва, 1995.
- Соловьев А., «Политология: политическая теория, политические технологии», Москва, 2008.
- Троянская война: Миф и реальность – http://www.historie.ru/civilizacii/krito-mikenskaya-civilizaciya/62-troyanskaya-voyna-mif-i-realnost.html (բացված՝ 13. 07. 2022)